

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն
Երևանի պետական համալսարանի
Կենսաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի
2026 թ. հուլիսի 2-ին կայացած թիվ 16 նիստի

Կենսաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի 2026 թ. հուլիսի 2-ին կայացած թիվ 16 նիստը նախագահում էր ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի դեկան կ.գ.դ., դոցենտ Կ.Ա. Ղազարյանը: Գիտական խորհրդի 32 անդամներից նիստին ներկա էին 22-ը:

Դեկան Կարեն Ղազարյանի կողմից ներկայացվեց նիստի օրակարգը, որը դրվեց քվեարկության և հաստատվեց միաձայն:

Օրակարգում՝

1. ՀՀ ԳԱԱ Լ.Ա. Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտի գիտաշխատողներ Հովակիմ Վառլենի Գրաբսկու և Սիրանույշ Վահանի Գրաբսկայի թեկնածուականատենախոսությունների թեմաների և գիտական ղեկավարի հաստատման հարցը:
2. ՀՀ ԿԳՄՄՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի «Կին ղեկավարների առաջխաղացմանն ուղղված ծրագիր 2024» մրցույթի շրջանակներում իրականացվող թեմաների ընթացիկ հաշվետվության հարցը:
3. «Ասպիրանտների և երիտասարդ հայցորդների հետազոտությունների աջակցության ծրագիր - 2024» մրցույթի շրջանակներում իրականացվող «24AA-1F057» ծածկագրով գիտական թեմայի ղեկավար Լիլի Քալաշյանի՝ թեմայի ֆինանսավորումը դադարեցնելու հիմքով պայմանավորված ամփոփիչ հաշվետվության հարցը:
4. ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի հայցորդների գիտական ղեկավարների փոփոխության հարցը:
5. Ընթացիկ հարցեր:

ԼՄԵՑԻՆ՝ ՀՀ ԳԱԱ Լ.Ա. Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտի Կառուցվածքային կենսաբանության գիտական խմբի գիտաշխատողներ Հովակիմ Վառլենի Գրաբսկու և Սիրանույշ Վահանի Գրաբսկայի թեկնածուականատենախոսությունների թեմաների Գ.00.02. «Կենսաֆիզիկա, կենսաինֆորմատիկա» մասնագիտությամբ և գիտական ղեկավարի հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ կենսաբանության ֆակուլտետի դեկան, կ.գ.դ. Կ.Ա. Ղազարյանը, ինչպես նաև ՀՀ ԳԱԱ Լ.Ա. Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտի Կառուցվածքային կենսաբանության գիտական խմբի գիտաշխատողներ Հովակիմ Վառլենի Գրաբսկին և Սիրանույշ Վահանի Գրաբսկայան, ովքեր հանդես եկան ելույթներով՝ ներկայացնելով իրենց առենախոսությունների թեմաներն և ներկա փուլում կատարված աշխատանքները:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

- հաստատել Հովակիմ Վառլենի Գրաբսկու՝ Գ.00.02. «Կենսաֆիզիկա, կենսաինֆորմատիկա» մասնագիտությամբ, (բնագավառ՝ կենսաբանական գիտություններ) թեկնածուական

ատենախոսության թեման՝ «Արհեստական բանականության, կառուցվածքային կենսաինֆորմատիկայի, մեծածավալ տվյալների վերլուծման և գերհաշվողական համակարգերի նախագծումը կառուցվածքաին դեղամիջոցների հայտնագործման նոր մոտեցումների ուսումնասիրության համար» (Designing AI, Structural Bioinformatics, Big Data Analysis, and Supercomputing for exploring new modalities in structure-based drug discovery) և գիտական ղեկավար նշանակել ֆիզ. մաթ. գիտ. թեկնածու Ռուբեն Արմենի Աբազյանին:

- հաստատել Սիրանույշ Վահանի Գրաբսկայի՝ Գ.00.02. «Կենսաֆիզիկա, կենսաինֆորմատիկա» մասնագիտությամբ, (բնագավառ՝ կենսաբանական գիտություններ) թեկնածուական ատենախոսության թեման՝ «Դեղամիջոցների ազդեցության կովալենտ կամ բազմաթիրախ կապման նոր մոտեցումների կիրառումը՝ արդյունավետության բարձրացման և կողմնակի ազդեցությունների նվազեցման նպատակով (Exploiting novel covalent or multi-target binding modes of drug action to increase efficacy and reduce side effects) և գիտական ղեկավար նշանակել ֆիզ. մաթ. գիտ. թեկնածու Ռուբեն Արմենի Աբազյանին:

ԼՍԵՑԻՆ՝ ՀՀ ԿԳՄՄՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի «Կին ղեկավարների առաջխաղացմանն ուղղված ծրագիր 2024» մրցույթի շրջանակներում իրականացվող թեմաների ընթացիկ հաշվետվության հարցը:

- Ղեկավար՝ Կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի դոցենտ, կ.գ.թ. Լիլիթ Սերգեյի Գաբրիելյան
«Ցիանոբակտերիաների ֆիկոցիանինից ստացված նանոմասնիկների բնութագրերը և հակամանրէային հատկությունները. կանաչ սինթեզի նոր մոտեցումներ», ծածկագիր 24WS-1F025

Լ.Ս. Գաբրիելյանը նշեց, որ հաշվետու ժամանակահատվածում *Arthrospira (Spirulina) platensis* և *Limnospira maxima* ցիանաբակտերիաներից մեկուսացված ֆիկոցիանինի միջնորդությամբ սինթեզվել են արծաթի նանոմասնիկներ (PC-AgՆՍ): Հետազոտվել են կենսածին PC-AgՆՍ-ի հակաբակտերիական, հակասնկային, հեմոլիտիկ և հակաօքսիդանտային հատկությունները, ինչպես նաև ՆՍ-ի ազդեցությունը թոքերի ադենոկարցինոմայի բջջային զծերի վրա: Մշակվել է ցիանաբակտերիաներից մեկուսացված ֆիկոցիանինից ցինկի օքսիդի նանոմասնիկների (PC-ZnՕՆՍ) կենսասինթեզի մեթոդը և օպտիմալացվել են ՆՍ-ի կայունացման ֆիզիկաքիմիական գործոնները: Իրականացվել է PC-ZnՕՆՍ-ի ֆիզիկաքիմիական վերլուծություն՝ UV-Vis սպեկտրասկոպիայի, ռենտգենյան դիֆրակցիայի, էներգիայի ցրման ռենտգենյան սպեկտրասկոպիայի, տրանսմիսիոն էլեկտրոնային մանրադիտակման և Ֆուրյե ձևափոխմամբ ԻԿ սպեկտրասկոպիայի օգնությամբ: Հաշվետու ժամանակահատվածում տպագրվել է մեկ գիտական հոդված Q1 քառորդի ամսագրում, ևս մեկը գտնվում է գրախոսման փուլում: Ստացված արդյունքները ներկայացվել են «Նոր զարգացման միտումները քիմիայում-2025» (NewTrendsChem-2025) միջազգային գիտաժողովին և տպագրվել թեզիսի տեսքով: Տվյալ նախագծի շրջանակներում խմբի երիտասարդ կատարող Աստղիկ Համբարձումյանը գերազանցությամբ պաշտպանել է մագիստրոսական թեզ:

- Ղեկավար՝ Կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի դոցենտ, կ.գ.թ. Ինգա Լևոնի Բագուկյան

«Մեղրատու մեղուների աղեստամոքսային ուղու միկրոբիոմը կախված տարվա եղանակներից և միջատասպան նյութերի ազդեցությունից», ծածկագիր 24WS-1F005

Ի.Լ. Բագուկյանը նշեց, որ 2025-2026 թվականներին իրականացված աշխատանքները ցույց են տվել, որ Գեղարքունիքի մարզից վերցված աշնանային նմուշները հարուստ են *Lachnospirales* կարգի ներկայացուցիչներով: Գեղարքունիքի, Կոտայքի և Սյունիքի մարզի ամառային նմուշներում հանդես են եկել *Escherichia-Shigella* ցեղերի ներկայացուցիչները, ինչը վկայում է անթրոպոգեն ախտոտվածության մասին: *Commensalibacter* ցեղի ներկայացուցիչները հանդիպում են բոլոր տարածաշրջանների աշնանային նմուշներում: MALDI-TOF MS համակարգով նույնականացվել են ավելի քան 200 մեկուսացված միկրոատերոֆիլ մեզոֆիլ բակտերիաներ: Դրանք հիմնականում պատկանում էին *Apilactobacillus*, *Lactobacillus*, *Lactocaseibacillus*, *Bombilactobacillus* և *Bifidobacterium* ցեղերին, որոնք հանդիսանում են մեղուների բնականոն միկրոբիոտայի ներկայացուցիչներ: Մեկուսացվել են նաև *Enterococcus*, *Klebsiella*, *Paenibacillus*, *Bacillus*, *Staphylococcus* և այլ ցեղերի ներկայացուցիչներ, որոնք ներթափանցում են արտաքին միջավայրից և հիմնականում հանդիսանում են անթրոպոգեն վարակի ցուցիչներ:

Մեկուսացված շտամներից 9-ը ցուցաբերել են հակաբակտերիալն ու հակասնկային ակտիվություն, ինչպես նաև ունակ են եղել աճել օքսալաթթու պարունակող սննդամիջավայրի մակերեսին՝ օրգանական ազոտի աղբյուրի առկայությամբ: Ուսումնասիրված շտամներից ոչ մեկն օժտված չէ ցիտոտոքսիկությամբ: Նշված 9 շտամներից հիդրոֆոբության առավելագույն աստիճան տոլուոլում ցուցաբերել է *Lactobacillus delbrueckii* subsp. *jacobsonii* KZT-j-106-3-103-1, իսկ հեքսանում՝ *Lactocaseibacillus rhamnosus* KZT-j-106-1 շտամը: Մեղվի թույնի նմուշները 10 մկգ/մլ կոնցենտրացիայով ունակ էին 50%-ով ճնշել HeLa, B16-F10, KPC և MDA-MB բջջային գծերի պրոլիֆերացիան: Հաշվետու ժամանակահատվածում տպագրվել է 1 հոդված Q2 վարկանիշ ունեցող ամսագրում: Խմբի երիտասարդ կատարող Ռ. Հարությունյանը բանավոր զեկույցով ներկայացրել է խմբի աշխատանքը «Մեղվաբուծության համահայկական 4-րդ ֆորում»-ում: Հաշվետվությունը ներկայացվել է նաև Դիլիջանում տեղի ունեցած «Առաջընթաց՝ արդյունավետ գիտությամբ» գիտաժողովին, իսկ երեք թեզիս ներկայացվել է IUMS 2026 կոնգրեսում:

- Ղեկավար՝ կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի ասիստենտ, «Կենսաբանություն» ԳՀԻ Մանրէաբանության, կենսաէներգետիկայի և կենսատեխնոլոգիայի լաբորատորիայի գիտաշխատող, կ.գ.թ. Հեղինե Խաժակի Գևորգյան

«Թթվակայուն համակարգերի կենսաէներգետիկական բնութագրերը *Escherichia coli* բակտերիաներում», ծածկագիր 24WS-1F018

Հ. Խ. Գևորգյանը նշեց, որ հաշվետու ժամանակահատվածում կատարվել են պլանով նախատեսված բոլոր աշխատանքները: Հետազոտություններն իրականացվել են *E. coli*-ի MG1655 վայրի տիպի և դրա թթվակայուն համակարգերի խանգարումներով միակի և եռակի մուտանտների կիրառմամբ (*ΔgadE*, *ΔcadC* և *ΔadiY*, *ΔgadEΔcadCΔadiY*): Ուսումնասիրվել է *E. coli* բակտերիաների թթվակայուն համակարգերի դերը թաղանթով իոնային հոսքերի արագության մեջ խմորման և շնչառության ընթացքում: Ցույց է տրվել, որ այս համակարգերի կարևորությունը իոնային հոսքերի արագության կարգավորման գործընթացում կախված է թթվային սթրեսի աստիճանից: Հաշվետու ժամանակահատվածում հրապարակվել է մեկ գիտական հոդված Biophysical Reports (Q1) ամսագրում, տպագրվել է երկու գիտաժողովի թեզիս (աբստրակտ), ներկայացվել է մեկ բանավոր զեկույց «Կենսաբանական գիտություններ և բնապահպանական լուծումներ՝ կայուն զարգացման նպատակներին հասնելու համար» միջազգային գիտաժողովում, ինչպես նաև մեկ թեզիս ընդունվել է ներկայացման Եվրոպական կենսաէներգետիկական գիտաժողովում (EBEC 2026, 2026 թ. օգոստոսի 22–27, Ստոկհոլմ, Շվեդիա):

- Ղեկավար՝ կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի դոցենտ, «Կենսաբանություն» ԳՀԻ Մանրէաբանության, կենսաէներգետիկայի և կենսատեխնոլոգիայի լաբորատորիայի առաջատար գիտաշխատող, կ.գ.դ. Նաիրա Ժորայի Սահակյան

«Բուսական ֆլավոնոիդների հակաբիոտիկ ակտիվությունը և դրանց կիրառման հնարավորությունները. համապարփակ ուսումնասիրություն in vitro և in silico հետազոտության միջոցով», ծածկագիր 24WS-1F003

Ն. Ժ. Սահակյանը նշեց, որ հաշվետու տարում իրականացվել է նախագծի պլանին համապատասխան հետազոտությունների ողջ ծավալը: Մասնավորապես՝ տարբեր մեթոդներով թեստավորվել է բուսական ֆլավոնոիդների /կատեխին, ռուտին, քվերցետին/, ֆենոլային թթու գալաթթվի, միո-ինոզիտոլ շաքարի և մոնոտերպեն ալկոհոլ մենթոլի հակաբակտերիական ակտիվությունը *E. coli* K12, *B. subtilis* WT-A1, *S. aureus* MDC, 5223, *S. typhimurium* MDC 1754, ampicillin-resistant *E. coli* DH5α-pUC18, and kanamycin-resistant *E. coli* pARG25 բակտերիաների նկատմամբ: Հետազոտվել է այդ մետաբոլիտների հակաբիոտիկ-մոդուլացնող ակտիվությունը՝ ամպիցիլինի և կանամիցինի կիրառմամբ: Ուսումնասիրվել է այս միացությունների ազդեցությունը բակտերիաների աճման պարամետրերի, գաղութառաջացման ունակության, բակտերիաների թաղանթով պրոտո-նային/կալիումական հոսքերի, FoF1-ԱԵՖ-ազային ակտիվության, ներբջջային և արտաբջջային pH-ի, օքսիդավերականգնողական պոտենցիալի, հակաօքսիդանտային ազդեցությամբ ֆերմենտների ակտիվության, թաղանթային լիպիդների գերօքսիդացման ինտենսիվության, բակտերիաների թաղանթներում թիոլային խմբերի քանակի, ոչ պիտակուցային թիոլների քանակի և այլ ֆիզիոլոգիական պարամետրերի վրա: Հետազոտվել է ընտրված ևս մի շարք բուսական լուծամզվածքների ֆենոլ-ֆլավոնոիդային միացությունների կազմը և այդ լուծամզվածքների հակաբակտերիական ակտիվությունն ու դրանց դրսևորման որոշ մեխանիզմները: Հետազոտվել է թիրախային մանրէներում այդ միացությունների ազդեցությամբ

կատալազի ակտիվությունը և դրա համապատասխան գենի էքսպրեսիայի մակարդակը: In silico մոտեցմամբ հետազոտվել են մենթոլի ազդեցության հնարավոր թիրախները ԱԵՖ-ազի կառուցվածքում: Հետազոտության արդյունքների հիման վրա հաշվետու տարում տպագրվել է 4 հոդված, որոնցից 2-ը՝ Q1, 1-ը՝ Q2 և 1-ը՝ Q3 քառորդի միջազգային գրախոսվող ամսագրերում և 1 գրքի գլուխ: Հետազոտական խմբի անդամները մասնակցել են մի շարք տեղական և միջազգային գիտաժողովների՝ բանավոր և պաստառային զեկույցներով:

- Ղեկավար՝ կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի ասիստենտ, «Կենսաբանություն» ԳՀԻ Փորձարարական ախտաբանության և բջջային ազդանշանի փոխանցման խմբի ղեկավար, կ.գ.թ. Հայարիի Գևորգի Ջավրուշյան

«Ընդհատվող հիպօքսիան որպես դեղամիջոցների ռեզիստենտության հաղթահարման եղանակ՝ կրծքագեղձի քաղցկեղի բուժման ժամանակ», ծածկագիր 24WS-1F036

Հ.Գ. Ջավրուշյանը նշեց, որ հաշվետու տարում իրականացվել են օրացույցային պլանով նախատեսված հիմնական գիտահետազոտական աշխատանքները՝ ընդգրկելով in vitro և in vivo փուլերը, մոլեկուլային վերլուծությունները, ինչպես նաև միջազգային համագործակցությունների զարգացումը: Նախորդ տարվա in vitro փորձերի արդյունքների հիման վրա ընտրվել են ընդհատվող հիպօքսիայի օպտիմալ պայմանները in vivo մոդելի համար: CoCl_2 -ի (100–300 μM) համեմատական ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ առավել արտահայտված փոփոխությունները HIF-1 α , ABCB1, GLUT1, BCL-2 և Caspase-3 մարկերների մակարդակներում արձանագրվում են 200 μM կիրառման դեպքում: Ստացված տվյալների հիման վրա կենդանական մոդելներում կիրառվել է 13% թթվածնային պայմաններում չափավոր ընդհատվող հիպօքսիայի ցիկլային ռեժիմ: Փորձերի ավարտից հետո իրականացվել է հյուսվածքների անջատում և համապարփակ մոլեկուլային վերլուծություն (Western blot, IHC-IF և այլ մոլեկուլային կենսաբանության և կենսաքիմիական մեթոդներ), որի ընթացքում գնահատվել են դեղակայունության, ապոպտոզի, անգիոգենեզի և բջջային սթրեսի հետ կապված մարկերները (HIF-1 α , ABCB1, GLUT1, BCL-2, Caspase-3 և այլն): Ստացված արդյունքները ցույց են տվել, որ հիպօքսիայի և բուժման համակցված կիրառումը հանգեցնում է Caspase-3-ի էական ակտիվացման, ուռուցքային բեռի նվազման և կենդանիների գոյատևման բարելավման: Միայն բուժում ստացած խմբերում նման արտահայտված փոփոխություններ հիմնականում չեն արձանագրվել: Արդյունքները վկայում են, որ ընդհատվող հիպօքսիան կարող է նպաստել ուռուցքային միկրոմիջավայրի վերածրագրավորմանը, բարձրացնել բուժման նկատմամբ զգայունությունը և նվազեցնել դեղակայունության դրսևորումները: Նախնական տվյալները նաև մատնանշում են Doxorubicin-ով պայմանավորված կարդիոտոքսիկության հնարավոր նվազեցում հիպօքսիայի կիրառման պայմաններում: Հրապարակվել է մեկ հոդված FASEB Journal ամսագրում, ներկայումս երկու հոդված գտնվում են խմբագրման փուլում, իսկ ես երկուսը՝ պատրաստման փուլում: Արդյունքները ներկայացվել են 8 միջազգային գիտաժողովներում՝ ներառյալ հրավիրված բանավոր զեկույցումներ և պաստառային ներկայացումներ: Միջազգային համագործակցության շրջանակներում շարունակվել են

աշխատանքները Օրեգոնի առողջության և գիտության և Զաարլանդի համալսարանների գործընկերների հետ: Ընդհանուր առմամբ, հաշվետու տարում նախագիծը անցում է կատարել մեխանիստիկ ուսումնասիրություններից դեպի in vivo արդյունավետության գնահատման փուլ՝ ապահովելով նշանակալի գիտական արդյունքներ, միջազգային համագործակցության ընդլայնում, երիտասարդ հետազոտողների մասնագիտական զարգացում, ինչպես նաև բարձր ազդեցության գիտական հրապարակումների հիմքերի ձևավորում:

- Ղեկավար՝ «Կենսաբանություն» ԳՀԻ-ի Կիրառական Էկոլոգիայի և շրջակա միջավայրի հետազոտությունների լաբորատորիայի ավագ գիտաշխատող, Էկոլոգիայի և բնության պահպանության ամբիոնի դոցենտ, կ.գ.թ. Լուսինե Ռաֆիկի Համբարյան

«ՀՀ կարևոր ջրային էկոհամակարգերում ցիանոբակտերիաների ծաղկում հրահրող գործոններ.

ծաղկման երևույթի և դրա դրդապատճառների համապարփակ հետազոտում»,

ծածկագիր 24WS-2H024

Լ. Ռ. Համբարյանը նշեց, որ հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են հետազոտություններ՝ Սևանա լիճ-Հրազդան գետ-Երևանյան լիճ հիդրոկասկադի ֆիտոպլանկտոնային համակեցության տեսակային տրանսֆորմացիան և էվտրոֆիկացիայի աստիճանը գնահատելու համար: Աշխատանքների ընթացքում գնահատվել է միկրոօրգանիզմների դոմինանտ տեսակների տեղափոխման (միգրացիայի) հնարավորությունը լիճ-գետ-ջրամբար համակարգով՝ հաշվի առնելով տարբեր հիդրոլոգիական և էկոլոգիական պայմանները: Համադրվել են մանրադիտակային և մոլեկուլային eDNA (շրջակա միջավայրի ԴՆԹ) մետաբարկոդինգային վերլուծության արդյունքները: Մոլեկուլային հետազոտությունները էապես ընդլայնել են պատկերացումները տվյալ ջրային էկոհամակարգերի ցիանոբակտերիաների կենսաբազմազանության և քանակական դինամիկայի մասին:

- Ղեկավար՝ կենսաֆիզիկայի ամբիոնի դոցենտ կ.գ.դ. Մ.Ա. Փարսադանյան
«Միաշղթա և երկշղթա պոլիոիբոնուկլեոտիդների հետ դոֆամին նեյրոմեդիատորի փոխազդեցության մեխանիզմների ուսումնասիրությունը», ծածկագիր 24WS-1F011

«24WS-1F011» ծածկագրով թեմայի կատարող, կենսաֆիզիկայի ամբիոնի դոցենտ, կ.գ.թ. Մ.Ա. Շահինյանը նշեց, որ հաշվետու ժամանակաշրջանում շարունակվել են հետազոտությունները դրամաշնորհի շրջանակներում հետևյալ ուղիություններով՝ իրականացվել է դոֆամինի և սինթետիկ պոլի-ոիբոնուկլեոտիդների հետ նրա կոմպլեքսների ուսումնասիրությունները սպեկտրասկոպիկ և ՄԴ-ի եղանակներով, ուսումնասիրվել է ԴՆԹ-ի փոխազդեցությունը դոֆամինի հետ ՈԻՄ-հալման եղանակով, իրականացվել են ԴՆԹ-դոֆամին կոմպլեքսների ուսումնասիրությունները АО-ն, EtBr-ը և Hoechst 33258 (H33258) առկայության պայմաններում, բացահայտվել գլխուղեղի դոֆամիներգիկ և սերոտոնիներգիկ ուղիների գործառույթներն ու դրանց խանգարումները, որոնք հանգեցնում են նեյրոդեգեներացիայի: Հրատարակվել է 3 գիտական հոդված և 1 թեզիս (ներկայացվել է որպես

բանավոր գեկույց միջազգային գիտաժողովում): 2 հոդված գտնվում է Q1 վարկանիշ ունեցող ամսագրերի խմբագրություններում, որոնցից մեկը ներկայումս լրամշակվում է՝ ըստ գրախոսների դիտողությունների: Գիտական ղեկավարը մասնակցել է 2026 թ. մայիսի 11-16-ը ք. Դիլիջանում կայացած «Առաջընթաց՝ արդյունավետ գիտությամբ» ամենամյա ամփոփիչ գիտաժողովի աշխատանքներին և հանդես է եկել բանավոր գեկուցմամբ: Ներկայումս պատրաստվում է 1 պատաստային գեկույց՝ ս.թ. հուլիսի 4-8-ը կայանալիք FEBS (Եվրոպական կենսաքիմիական ընկերությունների ֆեդերացիա) հերթական կոնգրեսին ներկայացնելու համար: Դրամաշնորհի արտասահմանյան գործընկեր՝ Կալիֆորնիայի համալսարանի Հիշողության և նյարդաբանական խանգարումների ինստիտուտի (UCI MIND) աշխատակից Հ. Դավթյանն այցելել է Երևանի պետական համալսարան: Այցի շրջանակներում նա մասնակցել է ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի 90-ամյակին նվիրված «Biological Sciences and Environmental Solutions for the Achievement of Sustainable Development Goals» միջազգային գիտաժողովին:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ երաշխավորել վերոնշյալ բոլոր թեմաների հետագա ֆինանսավորումը:

ԼՍԵՑԻՆ՝ ՀՀ ԿԳՄՄՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման «Ասպիրանտների և երիտասարդ հայցորդների հետազոտություններին աջակցության ծրագիր-2024» մրցույթի շրջանակներում իրականացվող ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի առկա ուսուցմամբ ասպիրանտ, «Կենսաբանություն» ԳՀԻ Ընդհանուր և մոլեկուլային գենետիկայի լաբորատորիայի կրտսեր գիտաշխատող Լիլի Ավետիսի Քալաշյանի «24AA-1F057» ծածկագրով «Էքզոսոմների արգելակիչների կիրառումը ճառագայթմամբ մակածված ԴՆԹ-ի անկայունության մակարդակի պոտենցիալ բարձրացման նպատակով քաղցկեղային բջիջներում» թեմայի ամփոփիչ հաշվետվության հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ՝ «Կենսաբանություն» ԳՀԻ Ընդհանուր և մոլեկուլային գենետիկայի լաբորատորիայի կրտսեր գիտաշխատող Լիլի Ավետիսի Քալաշյանը (Թեմայի իրականացման համար տրամադրված ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին պայմանագիր. N 10-3/24AA-1F057, «15» 10. 2024 թ): Նա նշեց, որ 2024-2026թթ. կատարել է պլանով նախատեսված գիտական աշխատանքները: Այս նախագծի նպատակն էր գնահատել էքզոսոմների արգելակման ազդեցությունը արագացված էլեկտրոններով ճառագայթված քաղցկեղային բջիջների ռադիոզգայնության վրա: Իրականացվել են GW4869 էքզոսոմների ինհիբիտորի բջջաթունայնության գնահատում, արագացված էլեկտրոններով ճառագայթման գենաթունային ազդեցության գնահատում՝ ԴՆԹ կոմետ մեթոդի կիրառմամբ, ճառագայթված բջիջների կենսունակության գնահատում՝ գադոլինների ձևավորման թեստի կիրառմամբ, ճառագայթմամբ մակածված օքսիդային սթրեսի գնահատում՝ DCFDA ներկման և երկֆոտոնային մանրադիտակման, ինչպես նաև 8-OhdG մակարդակի փոփոխության գնահատման միջոցով: ՊՇՌ մեթոդի կիրառմամբ իրականացվել է ճառագայթմամբ մակածված արտաբջջային միտոքոնդրիումային ԴՆԹ-ի նույնականացում: 20.12.24

– 19.01.25 իրականացված գործուղման ժամանակ Գերմանիայի Յենա քաղաքի Ֆրիդրիխ Շիլլերի համալսարանում իրականացվել է 1.5, 3 և 6Գր դոզաներով ճառագայթված բջիջների թելոմերային հատվածների Q-FISH հետազոտություն: Ստացված արդյունքները նպաստում են չարորակ ուռուցքների ռադիոթերապիայում գերկարճ ազդակների կիրառմամբ նոր տեխնոլոգիաների զարգացման հետագա ուսումնասիրությունների ռազմավարության ընտրությանը: Ծրագրի իրականացման արդյունքում տպագրվել է՝ 1 հոդված և 3 թեզիս:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ վերոհիշյալ թեմայի աշխատանքները համարել ավարտված:

ԼՍԵՑԻՆ՝ ԵՊՀ Կենսաբանության ֆակուլտետի կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի հայցորդ Անուշ Ռոլանդի Բաբայանի և կենսաֆիզիկայի ամբիոնի հայցորդ Գայանե Գրիգորի Միկոյանի գիտական ղեկավարների փոփոխության հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի ղեկան՝ կ.գ.դ., դոցենտ Կարեն Ղազարյանը, կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի վարիչ, կ.գ.դ., պրոֆեսոր Աննա Փոլադյանը: Վերջինս հանդիսանալով հայցորդների գիտական ղեկավար նշեց, որ, հիմք ընդունելով հայցորդներից ատենախոսական հետազոտությունների ընթացիկ արդյունքների վերլուծությունը և արձանագրված միջանկյալ տվյալների գիտական առանձնահատկությունները, նպատակահարմար է իրականացնել գիտական ղեկավարի փոփոխություն: Որպես նոր գիտական ղեկավար՝ Ա. Փոլադյանն առաջարկեց նույն ամբիոնի պրոֆեսոր, կ.գ.դ. Կարեն Արմենի Թոչունյանի թեկնածությունը:

Ա. Փոլադյանը նշեց, որ կենսաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի 2025թ. դեկտեմբերի 23-ի թիվ 6 նիստում հաստատվել են Անուշ Ռոլանդի Բաբայանի՝ Գ.00.04 «Կենսաքիմիա» մասնագիտությամբ, թեկնածուական ատենախոսության թեման՝ «Սրջնաթթվի նյութափոխանակությունը *Escherichia coli*-ում օսմոսային սթրեսի դեպքում pH-ի տարբեր արժեքներում» և Գայանե Գրիգորի Միկոյանի՝ Գ.00.02 «Կենսաֆիզիկա, կենսաինֆորմատիկա» մասնագիտությամբ, թեկնածուական ատենախոսության թեման՝ «*Escherichia coli*-ում պրոտոնային ԱԵՖ-ազի դերը օրգանական թթուների տեղափոխման գործընթացում խմորման պայմաններում», երկու դեպքում էլ գիտական ղեկավար է նշանակվել կ.գ.դ. պրոֆեսոր Ա. Ա. Փոլադյանը:

Հիմք ընդունելով հայցորդներից ատենախոսական հետազոտությունների ընթացիկ արդյունքների վերլուծությունը և արձանագրված միջանկյալ տվյալների գիտական առանձնահատկությունները՝ նպատակահարմար է իրականացնել հայցորդների գիտական ղեկավարի փոփոխություն:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ հաշվի առնելով ամբիոնի կարծիքը

- ԵՊՀ Կենսաբանության ֆակուլտետի կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի հայցորդ Անուշ Ռոլանդի Բաբայանի՝ Գ.00.04 «Կենսաքիմիա»

մասնագիտությամբ, «Մրջնաթթվի նյութափոխանակությունը *Escherichia coli*-ում օսմոսային սթրեսի դեպքում pH-ի տարբեր արժեքներում» թեկնածուական ատենախոսության գիտական ղեկավար նշանակել Կենսաբանության ԳՀԻ տնօրեն, կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի պրոֆեսոր, կ.գ.դ. Կարեն Արմենի Թոշունյանին:

- ԵՊՀ Կենսաբանության ֆակուլտետի կենսաֆիզիկայի ամբիոնի հայցորդ Գայանե Գրիգորի Միկոյանի՝ Գ.00.02 «Կենսաֆիզիկա, կենսաինֆորմատիկա» մասնագիտությամբ, «*Escherichia coli*-ում պրոտոնային ԱԵՖ-ազի դերը օրգանական թթուների տեղափոխման գործընթացում խմորման պայմաններում» թեկնածուական ատենախոսության գիտական ղեկավար նշանակել Կենսաբանության ԳՀԻ տնօրեն, կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի պրոֆեսոր, կ.գ.դ. Կարեն Արմենի Թոշունյանին:

Ընթացիկ հարցեր:

Գիտական խորհրդի նիստի օրակարգում ներառված էր ևս մեկ հարց նվիրված դասընթացների գործնական բաղադրիչի լիարժեք ապահովմանը: Խնդրի արդյունավետ լուծման նպատակով առաջարկվեց դասացուցակում օպտիմալացնել դասախոսական և լաբորատոր ժամերի բաշխվածությունը՝ ապահովելով դրանց զուգահեռ ու փոխլրացնող կազմակերպումը: Կարևորվում է նաև կրթական գործընթացում լաբորանտների ծանրաբեռնվածության հստակեցման ու պարզաբանման խնդիրը՝ ըստ սպասարկվող դասընթացների և լաբորատորիաների հազեցվածության: Այս նոր մոտեցումները նախատեսվում է իրականացնել մինչև հաջորդ ուսումնական տարվա առաջին կիսամյակի դասացուցակները կազմելը:

Գիտական խորհրդի նախագահ, կ.գ.դ., դոցենտ

Գ.Ա. Ղազարյան

Գիտական խորհրդի քարտուղար, կ.գ.թ., դոցենտ

Է.Վ. Շահազիզյան

